ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ**

| Համար/Միջոցառում | Պատաս-խանատու մարմին | Հաշվետվություն<br><br>(բառերի քանակը չպետք է գերազանցի 350-ը) | Համակատարող մարմնի կողմից իրականացված աշխատանքներ<br><br>(բառերի քանակը չպետք է գերազանցի 200-ը) | Գործողության իրականացման ընթացքում անցկացված հանրային քննարկման և դրան մասնակից դարձած թիրախային լսարանի վերաբերյալ տեղեկատվություն (առկա, հեռավար/առցանց)<br><br>(բառերի քանակը չպետք է գերազանցի 200-ը) | Կարգավիճակ /կատարված է/ կատարվել է մասամբ/ չի կատարվել |
|---|---|---|---|---|---|
| **1.1. Իրականացնել քննիչների վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց (այսուհետ՝ նաև քննիչների) վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել է □Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր□ վերտառությամբ դասընթացը, որի առարկայական ծրագրում, ի թիվ այլնի, քննարկման առարկա են հանդիսանում կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:<br>2022թ.-ի ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև □Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումնե | - | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | արդյունավետ քննությունը» վերտառությամբ դասընթացը, որը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ: | ոը կմեկնարկեն ս/թ հուլիսին: | | |
| **1.2. Իրականացնել դատախազների վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել է «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որի առարկայական ծրագրում, որպես առանձին թեմա, նախատեսվել են կյանքի դեմ ուղղված հանցագործություններին առնչվող հարցերը: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են կյանքի՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտի բնութագիրը, անձի կյանքի քրեաիրավական պաշտպանության միջոցները, կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մեկնաբանությունները և որակման առանձնահատկությունները և այլն: Սույն դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են նաև կյանքի իրավունքի վերաբերյալ միջազգային և ներպետական դատական պրակտիկան և իրավական այլ ակտերը: «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի առարկայական ծրագրում նախատեսվել են կյանքի իրավունքի վերաբերյալ գործերի քննության միջազգային չափորոշիչների, անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման առանձնահատկությունների և այս հանցատեսակի վերաբերյալ գործերով վարույթ | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումնե րը կմեկնարկեն ս/թ սեպտեմբեր ամսից: | - | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | նախաձեռնելու հիմնախնդիրների վերաբերյալ առանձին հարցադրումներ: | | | |
| **1.3. Իրականացնել դատավորների վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել է «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որի առարկայական ծրագրում, որպես առանձին թեմա, նախատեսվել են կյանքի դեմ ուղղված հանցագործություններին առնչվող հարցերը: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են կյանքի՝ որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտի բնութագիրը, անձի կյանքի քրեաիրավական պաշտպանության միջոցները, կյանքի դեմ ուղղված հանցագործությունների մեկնաբանությունները և որակման առանձնահատկությունները և այլն: Սույն դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են նաև կյանքի իրավունքի վերաբերյալ միջազգային և ներպետական դատական պրակտիկան և իրավական այլ ակտերը: Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որի ծրագրում, ի թիվ այլնի, ներառվել են կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը: «ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները» դասընթացի շրջանակներում նախատեսվել են կյանքի իրավունքի, այդ իրավունքի սահմանափակումների սահմանադրական և կոնվենցիոն հիմքերի | **Արդարադատության ակադեմիա**<br><br>2022թ. ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել են համապատասխան վերապատրաստումները | Վերապատրաստվել է 55 դատավոր՝ 23,9%: | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վերաբերյալ առանձին թեմաներ: «ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի առարկայական ծրագրում նախատեսվել են կյանքի իրավունքի վերաբերյալ գործերի քննության միջազգային չափորոշիչների, անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման առանձնահատկությունների և այս հանցատեսակի վերաբերյալ գործերով վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրների վերաբերյալ առանձին հարցադրումներ:<br>2022թ.-ի ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև «Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը» վերտառությամբ դասընթացը, որը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ: | | | |
| **1.7 Իրականացնել քրեակատարողական ծառայողների վերապատրաստումներ (դասընթացներ) կյանքի իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Քրեակատարողական ծառայության ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվում են ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով: Վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացներն անց են կացվում ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Կարբիում՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի ուսումնական կենտրոնում: Հարկ է նշել, որ | | Վերապատրաստվել է 516 քրեակատարողական ծառայող՝ 26% | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | յուրաքանչյուր տարի անցկացվելիք դասընթացների համար նախօրոք կազմվում և հաստատվում է թեմաների ցանկ: 2022 թվականի վերապատրաստումների ծրագրերի շրջանակում ընդգրկված է նաև «Կյանքի իրավունք» թեմայով դասընթաց: | | | |
| **7.1. Քննիչների վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել են «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար», ինչպես նաև «Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացները: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ հուլիսին: | - | կատարվել է մասամբ |
| **7.2 Դատախազների վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել են «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար», «Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննություն», «Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացները: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ծրագրով 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին ընդհանուր մասնագիտական առարկաներով իրականացվել են | 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին ընդհանուր մասնագիտական առարկաներով վերապատրաստվել է 72 դատախազ՝ 21,1% | կատարվել է մասամբ |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխան վերապատրաստումները, իսկ մասնագիտական առարկաներով վերապատրաստումները կիրականացվեն ս/թ սեպտեմբեր դեկտեմբեր ամիսներին: | | |
| **7.3 Դատավորների վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել են □Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում ու դրա դեմ պայքար□, □Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը□, □Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացները: | **ՀՀ արդարադատության ակադեմիա** 2022 թվականի ծրագրով 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին ընդհանուր մասնագիտական առարկաներով իրականացվել են համապատասխան վերապատրաստումները, իսկ մասնագիտական առարկաներով վերապատրաստումները կիրականացվեն ս/թ սեպտեմբեր դեկտեմբեր ամիսներին: | 2022 թվականի ծրագրով 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին ընդհանուր մասնագիտական առարկաներով վերապատրաստվել է 55 դատավոր՝ 23,9% | կատարվել է մասամբ |
| **12.3 ՀՀ ոստիկանության և ռազմական ոստիկանության** | ՀՀ ՊՆ | Երևանի, Էջմիածնի, Աբովյանի, Արարատի, Գյումրիի, Վայքի, Սիսիանի բաժիններում տեղադրվել են տեսախցիկներ, իսկ մնացած | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **բաժիններում տեղադրել տեսածայնագրման միջոցներ** | | տարածքային ստորաբաժանումներում տեսախցիկների տեղադրումն ընթացքի մեջ է: | | | |
| **13. Ձեռք բերել ծերբակալված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխող մատչելի տրանսպորտային միջոցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ ոստիկանություն | Ձերբակալված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխող մատչելի, տրանսպորտային միջոցների միջազգային ստանդարտներին համապատասխանող չափանիշների վերհանման ուղղությամբ Ոստիկանությունում իրականացվել են աշխատանքներ՝ անհրաժեշտ տեխնիկական բնութագրերի կազմումն ապահովելու համար: Սակայն գնման գործընթաց դեռևս չի իրականացվել, քանի որ նշված մեքենաների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները չեն ներառվել ՀՀ ոստիկանության ինչպես 2022-2024թթ., այնպես էլ 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերում: Ներկայումս ՀՀ ոստիկանության կողմից միջոցներ են ձեռնարկվում նշված ծախսերը, որպես լրացուցիչ ֆինանսական պահանջ, 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառելու համար: | | | Չի կատարվել |
| **19. Ապահովել խոշտանգումից տուժած անձանց հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմները** | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ արդարադատության նախարարությունը ԵԽ փորձագիտական աջակցությամբ մշակվել է խոշտանգումից տուժած անձանց ռեաբիլիտացիայի իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշների, արտասահմանյան փորձի և ներպետական օրենսդրության, պրակտիկայի համեմատական դիտարկմանն առնչվող հետազոտությունը: Հետազոտության շրջանակներում առանձնացվել են մի շարք երկրների մոդելներ, ուսումնասիրվել են այս ոլորտում ՀՀ-ում գործող հասարակական | | - | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, դրանց ծավալը, հիմնական մոտեցումները, ուսումնասիրվել են ՀՀ օրենսդրությամբ առկա կառուցակարգերը, թրաֆիքինգի և շահագործման զոհերին և ընտանեկան բռնության զոհերին տրամադրվող ծառայությունների շրջանակներում գործող մոդելները՝ թե՛ պետության կողմից անմիջականորեն մատուցվող ծառայությունների, թե՛ պետության կողմից պատվիրակված ծառայությունների տեսանկյունից: Ուսումնասիրության արդյունքներով նախարարությունը շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ կնախաձեռնի համապատասխան օրենսդրական և պրակտիկ բարեփոխումներ խնդիրը հնարավորինս սեղմ ժամկետներում հասցեագրելու նպատակով: | | | |
| **18.1 Ստեղծել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ, որը կերաշխավորի դիմողի պաշտպանությունը** | ՀՀ ՊՆ | ՊՆ և ԳՇ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանում այցելել են զորամասեր, որի ընթացքում հանդիպում- զրույցներ են իրականացրել զինծառայողների հետ, անհրաժեշտության դեպքում նաև առանձնազրույց: Զինծառայողները տեղեկացվել են, որ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին տեղեկատվություն տրամադրելու դեպքում զինծառայողների տվյալները և հեռախոսահամարը գաղտնի են պահվում: | | 130 զինծառայող | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **15.1 Մշակել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային չափանիշներին համապատասխան (Կատարվել է ուսումնասիրություն խոշտանգումների համատեքստում «ֆիզիկական ուժեղ ցավ» և « հոգեկան տառապանք» եզրույթների սահմանումների, դրսևորումների վերաբերյալ)** | ՀՀ արդարադատության նախարարություն | Արդարադատության նախարարությունը Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող (SIDA) և Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտի (Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law) կողմից իրականացվող ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշակել է համապատասխան ուղեցույցը: Ուղեցույցի նպատակն է ուղղորդել իրավակիրառողին այս բարդության միջով և ծառայել որպես համահունչ և համապարփակ աղբյուր: Այդ նպատակով ուղեցույցը ներկայացնում է ուժեղ ցավի կամ տառապանքի տարրի վերաբերյալ հեղինակավոր դատական պրակտիկայի և մեկնաբանության եզակի համադրություն՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով դրանց վերաբերյալ հայաստանյան իրավական համակարգին և պրակտիկային: Միջազգային իրավունքում խոշտանգումների հայտնի սահմանումներին և արգելքներին ծանոթանալուց հետո ուղեցույցը իրավակիրառողին կծանոթացնի տարրի գնահատման հայեցակարգային չափանիշներին՝ կարևոր աղբյուրների և հեղինակավոր մարմինների ամբողջական հղումներով հանդերձ: Ուղեցույցի մշակումը գտնվում է վերջնականացման փուլում: | | 2021թ. մայիսի 31-ին անցկացվել է առցանց քննարկում-խորհրդակցություն շուրջ 10 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ<br><br>2021թ. հունիսի 1-ին անցկացվել է առցանց քննարկում-խորհրդակցություն պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ՝ 7 մասնակից: | Կատարվել է |
| **25.Օրենսդրորեն արգելել երեխայի նկատմամբ** | ՀՀ արդարադատ | Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի ինստիտուտ հետ համագործակցությամբ ազգային ու միջազգային փորձագետների | | 2021թ. նոյեմբերի 10-ին ՀՀ արդարադատության նախարարությունը կազմակերպել էր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **մարմնական պատիժները** | ության նախարարություն | ներգրավմամբ իրականացվել է Երեխայի նկատմամբ մարմնական պատիժներն արգելող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակմանն ուղղված հետազոտությունը: Հետազոտությունն անդրադառնում է մարմնական պատժի միջազգային մարդու իրավունքների և երեխայի իրավունքների շրջանակին, ինչպես նաև ՀՀ համապատասխան օրենսդրությանը և իրավակիրառ պրակտիկային, միջազգային լավագույն փորձին: Ուսումնասիրությունը վեր է հանում երեխայի նկատմամբ մարմնական պատիժների վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությունը և ներկայացնում բացերի հասցեագրմանն ուղղված առաջարկներ: Ուսումնասիրության հիման վրա Արդարադատության նախարարությունը կնախաձեռնի համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկումները՝ օրենսդրական փոփոխությունները մշակելու նպատակով: | | քննարկում, որին մասնակցել են շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների շուրջ 3 տասնյակ ներկայացուցիչ, այդ թվում նաև տեղական ու միջազգային փորձագետներ: | |
| **21. Բարելավել ազատությունից զրկված անձանց՝ դատարաններում պահելու համար նախատեսված խցերի պայմանները՝ միջազգային** | ՀՀ արդարադատության նախարարություն | Բարելավվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիս քաղաքի նստավայրի վարչական շենքի, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էջմիածին քաղաքի նստավայրի վարչական շենքի և Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գյումրի քաղաքի նստավայրի վարչական շենքի պայմանները: | | | Կատարված է |
| **22. Օրենսդրությամբ հստակեցնել Ոստիկանության և Արդարադատության** | ՀՀ արդարադատ | ՀՀ ներքին գործերի նախարարության ձևավորման հանգամանքով պայմանավորված չի կատարվել: | | | Չի կատարվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **նախարարության քրեակատարողական ծառայության ուղեկցող ստորաբաժանումների գործառույթները** | ության նախարարություն | | | | |
| **26.1. Քննիչների վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել է □Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր□ դասընթացը, որի առարկայական ծրագրում որպես առանձին թեմա նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները: 2022թ.-ի ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև □Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը□ վերտառությամբ դասընթացը, որը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ: ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022 թվականի ծրագրի շրջանակում ընդգրկվել է □Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ հուլիսին: | □Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասցընթացի շրջանակներում վերապատրաստվել է ՀՔԾ 7 քննիչ՝ 21,2%: | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները: | | | |
| **26.2. Դատախազների վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ներառվել է «Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները, ինչպես նաև «Զինվորական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկություններ» վերտառությամբ դասընթացը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ծրագրով իրականացվել են համապատասխան վերապատրաստումները: | 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին վերապատրաստվել է 54 դատախազ՝ 15,1% | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **26.5. Դատավորների վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ներառվել է «Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության ՄԻԵԴ չափանիշները, խոշտանգման քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերից դրա սահմանազատման և որակման առանձնահատկությունները: Վերապատրաստման ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև «Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» դասընթացը, որի ծրագրում որպես առանձին թեմա նախատեսվել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի պաշտպանությանն առնչվող ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքի վերաբերյալ թեմաները, ինչպես նաև ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:<br>2022թ.-ի ուսուցման ծրագրում ընդգրկվել է նաև «Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը» վերտառությամբ դասընթացը, որը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ սեպտեմբերին: | - | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | արդյունավետ քննության ոլորտում կրիմինալիստիկական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ: | | | |
| **26.8 Քրեակատարողական ծառայողների վերապատրաստումներ իրականացնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Քրեակատարողական ծառայության ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվում են ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցով:<br>2022 թվականի առաջին կիսամյակում, ի թիվս այլնի, 2022 թվականի վերապատրաստումների ծրագրերի շրջանակում իրականացվել է «Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշները» թեմայով դասընթաց: | | Վերապատրաստվել է 516 քրեակատարողական ծառայող՝ 26% | կատարվել է մասամբ |
| **27.Ապահովել քննչական և դատավարական գործողությունների տեսաձայնագրումը** | ՀՀ քննչական կոմիտե | ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումների կահավորման գործընթացը դեռևս ընթացքի մեջ է:<br>ՀՀ քննչական կոմիտեն մշակել է ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի «Քննչական գործողության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների բնութագիրը և չափանիշները, տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ 401-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 457-Ն որոշումը, համաձայն որի նախատեսվում է իրականացնել | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տեսաձայնագրման և տեսանկարահանող սարքերի չափորոշիչների փոփոխություն: 2022թ. դեկտեմբերի դրությամբ ՀՀ քննչական կոմիտեի ոչ մի ստորաբաժանում ապահովված չէ տեսաձայնագրման սարքավորումներով: | | | |
| **34.1. Իրականացնել քննիչների վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկված Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի ծրագրում որպես ինքնուրույն թեմա նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ հուլիսին: | - | կատարվել է մասամբ |
| **34.2. Իրականացնել դատախազների վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում շրջանակում ընդգրկվել է ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում քննարկվում են արդար դատաքննության իրավունքը և դրա բաղադրատարրերի էությունն ու քրեական վարույթում դրանց ապահովման հիմնախնդիրները, այդ հարցերի առնչությամբ ՄԻԵԴ պրակտիկան: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ սեպտեմբերին: | - | կատարվել է մասամբ |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **34.3. Իրականացնել դատավորների վերապատրաստումներ գործի արդարացի քննության իրավունքի թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ոստիկանների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների համար** | ՀՀ արդարադատության | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ընդգրկվել են ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր, ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր, ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր վերտառությամբ դասընթացները, որոնց շրջանակներում, ի թիվ այլնի, քննարկման առարկա են դարձվելու քրեաիրավական, վարչաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտներում գործի արդարացի քննության առնչվող իրավահարաբերությունները և այդ վարույթներում քննարկվող իրավունքի ապահովման հիմնահարցերը: 2022 թվականի ծրագրում ընդգրկված Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացի ծրագրում որպես ինքնուրույն թեմա նախատեսվել են արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հինահարցերը: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվել 2022 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացներով վերապատրաստումներ ը կմեկնարկեն ս/թ սեպտեմբերին: | - | կատարվել է մասամբ |
| **40.1 Քննիչների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարությա ն, խտրականության արգելքի թեմաներով** | ՀՀ արդարադատության | Քննիչների վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագրում ներառվել է Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը: Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ուսուցման ծրագրով ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստման ժամանակացույց է | - | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սահմանվել 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները: Նշված դասընթացով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ հուլիսին: | | |
| **40.2 Դատախազների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով** | ՀՀ արդարադատության | ՀՀ արդարադատության ակադեմիայի տարեկան վերապատրաստումների ուսուցման 2022 թվականի ծրագրում ներառվել է □Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր□ և □Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցեր□ վերտառությամբ դասընթացները: | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>2022 թվականի ծրագրով 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել են համապատասխան վերապատրաստումները | 2022 թվականի ծրագրով 2022թ. ապրիլ-մայիս ամիսներին վերապատրաստվել է 18 դատախազ՝ 5,04%: | կատարվել է մասամբ |
| **40.3 Դատավորների վերապատրաստումներ իրականացնել իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով** | ՀՀ արդարադատության | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման 2022թ. ծրագով ներառվել է □Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր□ վերտառությամբ դասընթացը, ինչպես նաև □Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակներում ուսումնասիրվում են ռասիզմի և խտրականության արգելքի վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպայի իրավունքին և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերին առնչվող թեմաները: Իրավահավասարության ապահովմանը և խտրականության արգելքին առնչվող առանձին թեմաներին անդրադարձ է | **ՀՀ արդարադատության ակադեմիա**<br><br>Իրականացվել են համապատատասխան ընդհանուր մասնագիտական վերապատրաստումները: Վկայակոչված հատուկ մասնագիտական առարկաներով վերապատրաստումները կմեկնարկեն ս/թ սեպտեմբերին: | 2022 թ. ապրիլ-մայիս ամիսներին □Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր□ վերտառությամբ դասընթացով վերապատրաստվել է 55 դատավոր՝ 23,9%: □ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները□ | կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կատարվում նաև 2022 թվականի ծրագրում ներառված □ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները□ դասընթացի շրջանակներում: 2022թ. ծրագրով իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներին է առնչվում նաև «Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր», «Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր», «Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը» վերտառությամբ դասընթացները: | | վերտառությամբ դասընթացով վերապատրաստվել է 55 դատավոր՝ 23,9%: | |
| **42. Պատասխանատվություն սահմանել ատելության խոսքի համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | Ատելության խոսքի դեմ պայքարն առավել համապարփակ հիմքերի վրա դնելու տեսանկյունից Ծրագրի շրջանակներում իրականացվել է խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ առանձին տվյալների հավաքագրման մասով առկա իրավիճակի գնահատում (ուսումնասիրության տեսքով[1]), մշակվել են տվյալների հավաքագրման համար անհրաժեշտ ձևանմուշների նախագծերը: Ս.թ. հունիսի 4-ին Արդարադատության նախարարությունը ԵԽ երևանյան գրասենյակի հետ համատեղ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ակտիվ ներգրավմամբ կազմակերպել էր հերթական քննարկումը՝ ուղղված ուսումնասիրության շրջանակներում ներկայացված բացերի վերհանմանը: [2] | | Քննարկմանը մասնակցել են պետական մարմինների շուրջ 15 ներկայացուցիչ: | |

[1] https://rm.coe.int/final-report-on-reforming-armenian-hate-speech-laws-arm/pdf/1680a0b84d
[2] https://www.coe.int/hy/web/yerevan/news/-/asset_publisher/UATN4Wl8F3Wu/content/assisting-national-beneficiaries-in-armenia-to-improve-their-disaggregated-data-collection-on-hate-crimes-discrimination-and-hate-

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **43. Բարձրացնել իրազեկվածությունը ատելության խոսքի վերաբերյալ** | ՀՀ արդարադատության նախարարություն | Արդարադատության նախարարությունը ԵԽ գործընկերների հետ մշակել է իրազեկման միջոցառումների նկարագիրը ներառող հայեցակարգը, որը գտնվում է վերջնականացման փուլում: Ակնկալում ենք գործողությունները մեկնարկել սեպտեմբերից: Արդարադատության նախարարությունը ԵԽ գործընկերների աջակցությամբ ս.թ. մայիսի 24-ին և 25-ին կազմակերպել էր ***<u>ատելության խոսքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված դասընթաց</u>***[3] պետական մարմինների և Ազգային ժողովի ներկայացուցիչների համար: Երկու հանդիպումների շրջանակներում ներկայացվեցին ատելություն սերմանող խոսքի միջազգային չափորոշիչներն ու սահմանումները, ատելության խոսքի բաղադրիչ տարրերի վերլուծությունը և դեպքի գնահատման եղանակների պարզաբանումը, պետական պաշտոնատար անձանց պարտավորությունները՝ կապված ատելություն խոսքի չտարածման հետ, ինչպես նաև ատելության խոսքի դեմ պայքարի մասին ազգային օրենսդրությունն և պրակտիկան: | | Վերապատրաստման դաընթացին մասնակցել է պետական մարմինների շուրջ 30 ներկայացուցիչ: | |

speech?inheritRedirect=false&redirect=https%3A%2F%2Fwww.coe.int%2Fen%2Fweb%2Fyerevan%2Fnews%3Fp_p_id%3D101_INSTANCE_UATN4Wl8F3Wu%26p_p_lifecycle%3D0%26p_p_state%3Dnormal%26p_p_mode%3Dview%26p_p_col_id%3Dcolumn-4%26p_p_col_count%3D1

[3] https://www.euneighbours.eu/hy/east/stay-informed/news/hayastanowm-atelowtyown-sermanog-xoski-dem-paykari-veraberyal-dasentats

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **47. Ապահովել հոգեկան, այդ թվում՝ մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն իրենց իսկ վերաբերող բոլոր որոշումների կայացման գործընթացներում** | ՀՀ արդարադատության նախարարություն | ՄԻՊ ԳԾ-ի փոփոխությունների նախագծով հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկի հիման վրա միջոցառումը վերաձևակերպվել է և տեղ է գտել նախագծում որպես 47.1 Կետ, Սույն միջոցառմամբ նախատեսվել է ապահովել հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը: Գործողության համար պատասխանատու մարմին է հանդիսանում ԱՍՀՆ-ն: Հարկ է նշել, որ այս գործողության շրջանակներում արդեն իսկ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցության իրականացվել է ուսումնասիրություն ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ, որը ԱՍՀՆ-ի հետ քննարկումների արդյունքներով կվերջնականացվի և օրենսդրական լուծման առաջարկություններով կներկայացվի շահագրգիռ կողմերի քննարկմանը: ԱՍՀ նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը սկսել մշակել օրենսդրական փոփոխություններ: | | - | Կատարվել է մասամբ |
| **47.1 Ապահովել հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա | Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց վերաբերող հարցերում որոշումներ կայացնելու իրավունքը ապահովելու և անգործունակության ինստիտուտի վերանայման նպատակով մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | րությ ուն | որոշման նախագիծը: Նախագիծը վերադարձվել է Նախարարություն լրամշակման նպատակով, ներկայումս գտնվում է քննարկումների փուլում: | | | |
| **48. Խրախուսել կանանց ներգրավումը ԶՈւ-ում** | ՀՀ ՊՆ | Ս.թ. ապրիլի 6-ին ՀՀ ՊՆ վար¬չական համալիրում տարբեր շահագրգիռ գերատեսչությունների, ՀՀ ՊՆ և ԶՈՒ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, զորամիավորումների (զորամասերի) հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալների կին զինծառայողների, կանանց խորհուրդների անդամների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել է «Զինված ուժերում կանանց ներգրավման խթանումը» թեմայով կլոր սեղան-քննարկում:<br><br>Կանանց խորհուրդների անդամների գործնական կարողությունների զարգացման նպատակով 2022թ. ապրիլին ԵԽ համագործակցությամբ 30 կին զինծառայողների համար իրականացվել է դասընթաց- սեմինար:<br>Տպագրվել և ՀՀ ԶՈւ է առաքվել «Զինծառայող կանանց սոցիալական իրավունքները և երաշխիքները» վերտառությամբ տեղեկատվական ուղեցույց:<br>Կին զինծառայողների թվաքանակի ավելացման նպատակով ՀՀ ՊՆ N զորամասում կազմավորվել է հրաձգային վաշտ, որը համալրվելու է միայն կին զինծառայողներով:<br>2022թ. ընթացքում պահեստազորից ծառայության են անցել 951 կին զինծառայող: | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն կազմվել և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ են ներկայացվել թվով 414 հատուցման գործեր, այդ թվում` հակառակորդի շփման գծում մարտական հերթապահության ժամանակ զոհված թվով 28, 1-ին կամ 2-րդ խմբի զինհաշմանդամություն ստացած թվով 4 նախկին զին-ծառայողների հատուցման գործեր, Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների ժամանակ զոհված թվով 44, անհայտ կորած և դատարանի վճռով անհայտ բացակայող ճանաչված թվով 114 և 1-ին կամ 2-րդ խմբի զինհաշմանդամություն ստացած թվով 12, ինչպես նաև 2022թ. սեպտեմբեր ամսին հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված թվով 211 և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ստացած թվով 1 նախկին զինծառայողների հատուցման գործեր:<br><br>2. Հաշվառվել է զինծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացված վնասվածքի (խեղման) հետևանքով 1-ին խմբի թվով 1, 2-րդ խմբի թվով 16 և 3-րդ խմբի թվով 156 զինհաշմանդամ, որոնց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգով և չափերով ՀՀ աշխատանքի և | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | սոցիալական հարցերի նախարարության միջոցով վճարվել են դրամական աջակցություններ՝ շուրջ 53.700.000 դրամի չափով<br><br>3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 68-րդ և 69-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն որոշման 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված կարգով ապահովվել է զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհ-ված (մահացած) զինծառայողների, զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո զինծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության, վնասվածքի կամ խեղման պատճառով հետագայում մահացած թվով 284 նախկին զինծառա¬յողների ընտանիքներին, օրենքով սահմանված դրամական աջակցությունների, ինչպես նաև հուղարկավորության, գերեզմանի բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի փոխհատուցման գումարների տրադրումը՝ շուրջ 475.100.000 դրամի չափով:<br><br>4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 10-րդ մասի և ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի N 916-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանված կարգով և պայմաններով ապահովվել է թվով 179 զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | անդամներին և 545 զինհաշմանդամ դարձած նախկին զինծառայողներին միանվագ դրամական օգնությունների տրամադրումը` 72.400.000 մլն դրամի չափով:<br><br>5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 04.02.2021թ. № 141-Ն որոշմամբ սահմանված կարգով նշանակվել է 585 հաշմանդամության զինվորական կենսաթոշակներ և զինհաշմանդամին տրվող ամենամսյա պարգևավճարներ:<br><br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 04.02.2021թ. № 141-Ն որոշմամբ սահմանված կարգով նշանակվել է 207 կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակներ և կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակառուներին տրվող ամենամսյա պարգևավճարներ:<br><br>6. ՀՀ կառավարության 06.12.2018թ. № 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով զոհված (մահացած) զինծառայողների 42 և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների 13 ընտանիքներ բնակարանային գնման վկայագրերի միջոցով ձեռք են բերել բնակարաններ (բնակելիտներ) և բարելավել են իրենց բնակարանային պայմանները: | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **50.Ավելացնել երեխաներին հոգեբուժական և վերականգնողական ծառայություններ մատուցող հաստատությունների քանակը** | ՀՀ առողջապահության նախարարություն | 1. ՀՀ առողջապահության նախարարության, «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի, Սևանի քաղաքապետարանի և Սևանի բժշկական կենտրոնի կողմից կնքված քառակողմ համաձայնագրի շրջանակներում 2021 թվականին շահագործման է հանձնվել Սևանի մանկական վերականգնողական կենտրոնը, որին տրամադրվել է պետական պատվեր:<br>2. ՀՀ ԱՆ 24.09.2020թ. թիվ 3306-Ա հրամանով «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծվել է արդի պահանջներին համապատասխան մանկական հոգեբուժական ծառայություն: Մանկական հոգեբուժական ծառայությունը գործում է 2021 թվականից սեպտեմբեր ամսից: | | | Կատարված է |
| **51. Բարձրացնել հանրային իրազեկվածությունը պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին** | ՀՀ առողջապահության նախարարություն | Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ընթացիկ տարում կազմակերպվել են 3 հարցազրույց, 4 հաղորդագրություն, 1 մամուլի ասուլիս:Տեղեկատվական նյութեր են հրապարակվել Հայաստանում առաջին մանկական պալիատիվ խնամքի կլինիկայի բացման վերաբերյալ: Մանկական պալիատիվ օգնության պետական աջակցության ծրագրերի թեմայով կազմակերպվել է մամուլի ասուլիս, ՀՀ ԱՆ Վ.Ա.Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի պալիատիվ ծառայության | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կլինիկայի բացման վերաբերյալ հրապարակվել է հաղորդագրություն, կազմակերպվել է լայն իրազեկում, այդ թվում հարցազրույց Հանրային հեռուստա Նախորդիվ նշված նյութերը տարածվել են զանգվածային լրատվամիջոցներին և հրապարակված են ԱՆ պաշտոնական կայքում:Նյութերը պատրաստվել են առողջապայության նախարարության կողմից, բանախոսել են առողջապահության նախարարության, ԱՆ պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի և Վ.Ա.Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնի մասնագետները:ընկերությամբ: | | | |
| **52. Իրականացնել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ (այդ թվում` ոլորտի իրավակարգավորումն երի) շարունակական կրթական ծրագրեր` բուժաշխատողների և ուսանողների համար** | ՀՀ առողջապահության նախարարություն | 2020-2022թթ. -ին ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում 90 բուժաշխատող անցել են պալիատիվ խնամք թեմայով վերապատրաստման դասընթացներ: | | | Կատարված է մասամբ |
| **54. Բարձրացնել առողջության պահպանման և բժշկական օգնության** | ՀՀ առողջապահու | Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների վերաբերյալ պաստառները փակցված են պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **իրավունքի (այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության) վերաբերյալ իրազեկվածությունը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև ՔԿՀ-ներում և հոգեբուժական հաստատություններում գտնվող անձանց համար** | թյան նախարարություն | իրականացնող բոլոր բուժհաստատություններում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում: Տվյալ հաստատությունների հետ ՀՀ առողջապահության նախարարությունն ունի պայմանագրային պարտավորություն իրազեկման պաստառների պարտադիր փակցված լինելու վերաբերյալ: | | | |
| **58. Օրենսդրորեն սահմանել հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ ոստիկանություն | Նշված գործողության վերջնարդյունքում պետք է ընդունվեր հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունները կանոնակարգող կառավարության որոշում, որի ընդունման համար, սակայն, «Հավաքների ազատության մասին» գործող օրենքով լիազորող նորմ սահմանված չէ:<br>Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված հավելված 2-ի 56-րդ կետի շրջանակում նախատեսվում է նշված օրենքում փոփոխությունների և լրացումների կատարում ուստի առաջարկվել է ի թիվս այլ փոփոխությունների, օրենքում նախատեսել լիազորող նորմ՝ սույն կետի կատարման հնարավորությունն ապահովելու համար: | | | Չի կատարվել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **65.Վերապատրաստում ներ իրականացնել մարդու տեղեկատվություն ստանալու իրավունքի թեմայով՝ ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների վերաբերյալ** | ՀՀ արդարադատության նախարարություն | «Աջակցություն Հայաստանին նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում մշակվել է տեղեկատվության ազատության վերաբերյալ ուղեցույցը[4], որը նախատեսված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, մասնավորապես, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատակիցների և տեղեկատվության ազատության պատասխանատուների համար: Ուղեցույցի նպատակն է օգնել վերջիններիս իրենց գործունեությունը համապատասխանեցնել տեղեկատվության ազատության ազգային և միջազգային չափանիշներին, ինչպես նաև ձևավորել ոլորտում առաջավոր ու դրական պրակտիկա: Ուղեցույցը կօգնի նրանց աշխատել առավել պրոֆեսիոնալ և արդյունավետ, ինչը կմեծացնի հասարակության վստահությունը պետական մարմինների նկատմամբ: Ուղեցույցը նաև օգտակար կլինի տեղեկատվության տրամադրման գործընթացն առավել կազմակերպված, նպատակային ու թիրախային դարձնելու հարցում: Սույն ուղեցույցի շրջանակներում 2022թ. փետրվար ամսին անցկացվել են պետական մարմինների ներկայացուցիչների վերապատրաստումներ | | Վերապատրաստվել է պետական մարմինների շուրջ 40 ներկայացուցիչ | Կատարված է |

[4] http://foiguidebook.tilda.ws/guidebook?fbclid=IwAR0vLFPcI5ZG-TLbQKefNKoxqk6m4B7Sx8LnMPWj125tH9qV9q6Ie4FKH7A#rec256675105.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՋԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **59.1Ռազմական գործողությունների արդյունքում հաշմանդամություն ստացած անձանց կրթության (այդ թվում՝ մասնագիտական) իրավունքի ապահովման համար ծրագրերի մշակում** | ՀՀ ԿԳՄ ՍՆ | Ռազմական գործողությունների արդյունքում հաշմանդամություն ստացած անձանց կրթության իրավունքի ապահովման համար ՀՀ կառավարությունը 2021 թվականի նոյեմբերի 4-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1784-Ն որոշումը: Որոշման նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, որով փոփոխության է ենթարկվել նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստի և կրթաթոշակի տրամադրման կարգում: Ըստ որի անվճար ուսուցման տեղերի քանակին համապատասխան՝ ուսանողական նպաստ տրվում է՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հաշմանդամության (ծանր և խորը աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակմամբ) զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողների, ամուսնու (կնոջ) մինչև 27 տարեկան զավակներին: Վերոնշյալ փոփոխությունը անժամկետ է: | | | |
| **67. Լրամշակել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը** | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ արդարադատության նախարարությունը www.e-draft.am կայքի միջոցով հանրային քննարկման էր ներկայացրել Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքում փոփոխությունների նախագիծը: | | | Կատարվել է մասամբ |
| **68.Փոփոխություններ կատարել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ արդարադատության նախարարություն | «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ կարծիքի: Նախարարության կողմից ներկայացված կարծիքի հիման վրա Նախագիծը լրամշակվել է: | ՀՀ վարչապետի աշխատակազմի ՄԻԵԴ ներկայացուցչի գրասենյակ<br>ՀՀ վարչապետի աշխատակազմի ՄԻԵԴ ներկայացուցչի գրասենյակի կողմից մշակվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ | Նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման՝ www.e-draft.am կայքում՝<br><br>https://www.e-draft.am/ru/projects/3460 | Կատարվել է մասամբ |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օրենքի նախագիծը: Նախագծի ընդունմամբ կհստակեցվի, թե որն է սեփականության օտարման դեպքում հանդիսանում համարժեք փոխհատուցում: Ավելին, կսահմանվի, թե որն է հանդիսանում անձի եկամտի միակ և հիմնական եկամտի աղբյուրը: Եկամտի միակ կամ հիմնական աղբյուրի կորստի դեպքում սեփականատիրոջը տրված փոխհատուցումը համարվում է բավարար, երբ սեփականատերը հնարավորություն է ունենում ձեռք բերել համանման որակի և տեսակի գույք նույն կամ համարժեք տարածքում, որտեղ օտարվող գույքը գտնվում էր: Սեփականատերերին կփոխհատուցեն ոչ միայն օտարվող գույքի շուկայական արժեքից | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տասնհինգ տոկոս ավելի գումարը, այլ նաև տեղափոխման և ձեռնարկատիրական գործունեության ընդհատման հետ կապված ծախսերը: Տեղափոխման հետ կապված ծախսերի մեջ ներառվում են շարժական գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը: Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ժամանակաշրջանի համար տրամադրվում է դրամական փոխհատուցում՝ ընդհատմանը նախորդող մեկ տարվա հարկային հայտարարագրերում ներկայացված միջին եկամտի կամ նվազագույն աշխատավարձի չափով ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով, | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բայց ոչ ավելի քան մեկ տարի:<br>Նախագիծը շրջանառվել է և գտնվում է կարծիքների ամփոփման և լրամշակման փուլում: | | |
| **69. Բարձրացնել աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ իրազեկվածությունը** | ՀՀ ԱՍՀ Ն | 1. 2020 թ. ընթացքում Նախարարության կողմից իրականացվել են իրազեկման հետևյալ աշխատանքները.<br>1) թվով 2 հանրային քննարկումներ՝ Աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգի նախագծի շուրջ,<br>2) Հանրային և Արմնյուզ հեռուստաընկերությամբ, Հանրային ռադիոյով, Սիվիլնեթ լրատվական կայքով իրականացվել է ռազմական դրությամբ պայմանավորված Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների վերաբերյալ իրազեկումներ:<br>2021 թվականի ընթացքում Նախարարության կողմից իրականացվել են իրազեկման հետևյալ աշխատանքները.<br>1) հանրության շրջանում աշխատանքային հարաբերությունների և պայմանների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով Նախարարության պաշտոնական էջերում պարբերաբար տեղադրվել են քաղաքացիների իրավունքների իրացման վերաբերյալ հրապարակումներ: Օրինակ՝<br>• այն մասին, թե ով է համարվում գործազուրկ և ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ գործազուրկի կարգավիճակ ստանալու համար (հղումը՝ https://bit.ly/3kCFZzz), | | | Կատարված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | • պարտադիր է աշխատանքային պայմանագիր կնքել նաև փորձաշրջան անցնելու դեպքում. որն է կնքման կարգը և որոնք են լուծման հիմքերը (հղումը՝ https://bit.ly/3qA3UDB),<br>• աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ գործատուն երբ և ինչ ընթացակարգով է կատարում վերջնահաշվարկ (հղումը՝ https://bit.ly/3zedP2D) և այլն,<br>2) այն մասին, թե ով է համարվում աշխատանք փնտրող անձ, ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ հաշվառման համար, ինչպես են գնահատվում աշխատանք փնտրող անձի կարիքները, ինչ ծրագրերից կարող է օգտվել գործազուրկը և այլն, տպագրվել են հարց ու պատասխանի գրքույկներ,որոնք շահառուներին տրամադրելու նպատակով՝ փոխանցվել են Միասնական սոցիալական ծառայությանը: Գրքույկները հասանելի են նաև ԱՍՅՆ քաղաքացիների ընդունելության բաժին դիմող քաղաքացիներին,<br>3) Աշխատանքային օրենսդրությամբ առկա կարգավորումների վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ են հրապարակվել նաև Նախարարության ֆեյսբուքյան էջում:<br>Հարկ է նշել նաև, որ 2021 թ. ընթացքում Նախարարության պաշտոնական հարթակներում, ընդհանուր առմամբ, տեղադրվել են աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ շուրջ երկու տասնյակ հրապարակումներ:<br>2022 թ. հունվար-հունիս ամիսներին Նախարարության կողմից պարբերաբար լուսաբանվել են աշխատանքային իրավունքներն ու դրանց պաշտպանության միջոցները: Հրապարակումներն ու տեսանյութերը, հանրային քննարկումներն ու մամուլի ասուլիսները | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | զետեղվել են Նախարարության պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում, որոնցից յուրաքանչյուրը տարածվել է մի քանի տասնյակ լրատվամիջոցներում: Մասնավորապես՝ • Հանրապետական եռակողմ հանձնաժողովի նիստի մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հաղթակներ՝ https://bit.ly/3u472sf, • Նախարարության կողմից հանրային քննարկման ներկայացված Աշխատանքային օրենսգրքի լրամշակված նախագծի վերաբերյալ իրազեկում՝ նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3D4WFYE (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից), • «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի քննարկման մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3bmjoFJ (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից), • գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի, արգելքների, ծանուցումների, ինչպես նաև արձակման նպաստ վճարելու հիմքերի մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3tF8ZvX (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից), • հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողներին տրամադրվող արձակուրդների ու այլ երաշխիքների մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3HXB2vK (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից), | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | • զորացրված երիտասարդների մասնագիտական կողմնորոշման, այս պահին գործող զբաղվածության ծրագրերի, Միասնական սոցիալական ծառայություն ներկայացված թափուր հաստիքների և այլնի մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3OoaeqW (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից),<br>• հաշմանդամություն ունեցող անձին աշխատանքի ընդունելու դեպքում՝ ըստ կարիքի, աշխատատեղի հարմարեցման, ուղեկցողի և տրանսպորտային ծախսերի փոխհատուցման մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3uagsmd (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից),<br>• աշխատանքային իրավունքի խախտումների, աշխատողի իրավունքների, աշխատանքային պայմանագրի կնքման կարևորության և այլնի մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3NoiQMV (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից),<br>• փորձաշրջանով աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարևորության, աշխատանքային պայմանագիր չկնքելու պատճառների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3a01ZCC (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից):<br>2. 1) 2020 թ. ընթացքում՝<br>- Կառավարության մամուլի սրահի, «Երկիր մեդիա» հեռուստաալիքի և Հանրային ռադիոյի եթերներով՝ համաճարակով պայմանավորված՝ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նախագծի վերաբերյալ իրազեկում,<br>- Զանգեզուր TV հեռուստաալիքի եթերով իրազեկում՝ նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելով,<br>-Գյումրու երկխոսության մեդիա կենտրոնով իրազեկում՝ աշխատանքային օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության կարգավորումների մասով տեղեկատվություն ներկայացնելով,<br>- Հանրային և Արմնյուզ հեռուստաընկերությամբ, Հանրային ռադիոյով, Սիվիլնեթ լրատվական կայքով իրականացվել է ռազմական դրությամբ պայմանավորված Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների վերաբերյալ իրազեկումներ:<br><br>2) 2021 թ. ընթացքում՝<br>- www.1lurer.am լրատվական կայքի միջոցով իրազեկվել է Աշխատանքային օրենսգրքով նախատեսված հայրության արձակուրդի տրամադրման կարգավորումների վերաբերյալ,<br>- Armenpress լրատվականի կենտրոնում, ինչպես նաև www.1lurer.am լրատվական կայքի միջոցով ներկայացվել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները,<br>- «Արմնյուզ» լրատվական հեռուստաընկերությամբ, www.1lurer.am լրատվական կայքի (թվով 3), www.24news.am լրատվական կայքի միջոցով, «Հրապարակում», Հայաստանի հանրային ռադիոյի «Քո ձայնը» | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հաղորդումների շրջանակներում իրականացվել է իրազեկում արցախցիների զբաղվածության ապահովմանն ուղղված պետական ծրագրերի վերաբերյալ,<br>- www.1lurer.am լրատվական կայքի (թվով 2), Armenpress լրատվականի (թվով 2), «Կենտրոն» հեռուստաընկերության, «Ավրորա» ռադիոյի, www.24news.am լրատվական կայքի միջոցով, «Հրապարակում» հաղորդաշարի շրջանակում ներկայացվել է սոցփաթեթների տրամադրման կարգում փոփոխությունների նախագիծը,<br>- աշխատող-գործատու իրավահարաբերությունների, աշխատանքային օրենսդրության կարգավորումների, նախատեսվող բարեփոխումների և այլնի վերաբերյալ տրամադրվել են հարցազրույցներ, այդ թվում՝ տե՛ս սույն հղմամբ https://bit.ly/3Gjg0Gr, https://fb.watch/ati7bc5lkC/,<br>- Armenpress լրատվականի կենտրոնում կազմակերպվել են մամուլի ասուլիսներ աշխատանքային օրենսդրության կարգավորումների, սոցիալական փաթեթի հատկացման կարգում կատարված փոփոխությունների, զբաղվածության քաղաքականության վերաբերյալ՝ https://bit.ly/3cdFtne, https://bit.ly/3qzy368, https://bit.ly/3c9A5kY և այլն:<br>3) 2022 թվականի հունվար-հունիս ամիսներին Նախարարության կողմից պարբերաբար լուսաբանվել են աշխատանքային իրավունքներն ու դրանց պաշտպանության միջոցները: Հրապարակումներն ու տեսանյութերը, հանրային քննարկումներն ու մամուլի ասուլիսները զետեղվել են Նախարարության պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում, որոնցից | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | յուրաքանչյուրը տարածվել է մի քանի տասնյակ լրատվամիջոցներում:<br>Մասնավորապես՝ իրականացվել են իրազեկման հետևյալ աշխատանքները.<br>- աշխատողների և գործատուների իրավունքների, պարտականությունների, աշխատանքային օրենսդրության գործող կարգավորումների մասին հարցազրույց՝ Արմենիա հեռուստաընկերության «Բարի լույս» հեռուստահաղորդում՝ https://bit.ly/3u6G5o5,<br>- աշխատուժի զարգացման առաջին ազգային համաժողովի մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3u4Mtfm (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից),<br>- ԱՍՀ նախարարի՝ «Մանթաշյանց» գործարարների միության ներկայացուցիչների հետ հանդիպման մասին իրազեկում՝ Նախարարության պաշտոնական հարթակներ՝ https://bit.ly/3u7wVaU (տարածվել է նաև լրատվամիջոցների կողմից):<br><br>Այլ<br>2021 թվականի ընթացքում<br>1) «Mom and kid» Expo-ի շրջանակներում ներկայացվել է տեղեկատվություն աշխատաժամերի վերաբերյալ առկա կարգավորումների մասին,<br>2) Կարևորելով աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացումն ու կրթություն-աշխատանք կապը՝ կազմակերպվել և լուսաբանվել են դասընթացներ, աշխատանքային տոնավաճառներ, օրինակ՝ https://bit.ly/3HTctiu, | | | |

*ՀՀ արդարադատության նախարարություն*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | https://www.facebook.com/permalink.php?story_fbid=4290989134347087&id=1639975722781788, 3) սոցփաթեթի հատկացման կարգում իրականացված լայնածավալ բարեփոխումների վերաբերյալ պատրաստվել են մի շարք հրապարկումներ, հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, այդ թվում՝ https://bit.ly/3Fjwayn, https://bit.ly/3owEbt4, https://bit.ly/3EplLB6, https://bit.ly/3FjAHRo, https://bit.ly/3JZ37n2, https://bit.ly/3falFm7 և այլն:<br><br>Գործողության համակատարող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ համաձայնությամբ, վերջինիս 2022 թ. հունիսի 29-ի N 01/12.1/3379-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունը:<br>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ իրականացրել է մի շարք գործողություններ:<br>Մասնավորապես, 2021 թ. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Բուլղարիայի Արտաքին գործերի նախարարության աջակցությամբ ավարտին է հասցրել «Մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):<br>Ծրագրի հիմնական նպատակներն են՝ | | | |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 1.եվրոպական չափանիշներին համապատասխան աշխատանքային իրավունքների հարցերով բողոքների պատշաճ քննության նպատակով Պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում,<br>2.աշխատանքային իրավունքների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի դերի, լիազորությունների և գործառույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում:<br>Հարկ է նաև նշել, որ Ծրագրի շրջանակում կազմակերպվել են դասընթացներ ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացման նպատակով, այնպես էլ ԶԼՄ ներկայացուցիչների համար՝ նվիրված աշխատանքային իրավունքների խթանմանն ու պաշտպանությանը:<br>Վերոգրյալից բացի, Ծրագրի շրջանակներում մշակվել է հրապարակային զեկույցը, որը վերաբերում է աշխատանքային իրավունքների իրացմանն առնչվող խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված առաջարկներին: Զեկույցը կազմվել է՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ու զեկույցներում տեղ գտած աշխատանքային իրավունքի ոլորտում առկա խնդիրները, հետևաբար՝ ունի պրակտիկ կիրառելիություն: Զեկույցի հիման վրա մշակվել են նաև Պաշտպանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցների համար ձեռնարկ-ուղեցույց՝ ուղղված ոլորտին առնչվող անհատական դիմումների քննարկման համար | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կարողությունների զարգացմանը՝ միջազգային և եվրոպական չափորոշիչների հիման վրա: Աշխատանքային իրավունքների վերաբերյալ հրապարակվել են թվով 4 իրազեկող տեսանյութեր: Դրանք պատրաստելու համար վեր են հանվել այն խնդիրները, որոնք տարիներ շարունակ հասցեագրվում են Պաշտպանին: Աշխատանքային իրավունքներին առնչվող այդ տեսանյութերը լայն տարածվել են լրատվամիջոցներով: Պատրաստվել և տպագրվել են նաև իրազեկող թռուցիկներ՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների, ինչպես նաև դրանց դիմելու ժամկետների և կարգի վերաբերյալ՝ ներկայացնելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները:<br><br>Տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.youtube.com/watch?v=YpPmcYneDUk&t=50s, https://www.youtube.com/watch?v=GoCssKvsdOo, https://www.youtube.com/watch?v=Q3gyha6OwXE&t=8s, https://www.youtube.com/watch?v=1f-E0DtMp3A&t=1s: | | | |
| **70. Օրենսդրորեն սահմանել աշխատանքային հարաբերությունների կարգավորման պարզեցված կառուցակարգեր՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ ԱՍՀՆ | ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ նախագծի մշակման նպատակով իրականացվել է աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի (մասնավորապես՝Աշխատանքի միջազգային կազմակերպության հիմնարար կոնվենցիաների և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի) պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանության | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վերլուծություն, ինչպես նաև վեր են հանվել իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները: Կատարված ուսումնասիրության արդյունքներն արտացոլված են «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնավորման մեջ: | | | |
| 72. Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործման և ամբողջականացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում | ՀՀ ԱՍՀ Ն | «Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է Նախարարության կողմից և կարծիքի է ներկայացվել շահագրգիռ մարմիններ:<br>Չնայած նրան, որ Նախագիծը մշակվել և ուղարկվել է շահագրգիռ մարմիններ կարծիքի, քննարկման արդյունքներով որոշվել է Նախագծին ընթացք չտալ՝ հաշվի առնելով, որ ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ հաստատված ՀՀ և Եվրոպական միության և Ատոմային Էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի 2-րդ հավելվածով «Աշխատավայրում առողջություն և անվտանգություն» բաժնով նախատեսվել են մի շարք միջոցառումներ (առանձին հրահանգների հետ կապված), որոնց շրջանակներում իրականացվելու են աշխատավայրում առողջության պաշտպանության և անվտանգության ապահովման մասով աշխատանքներ ՀՀ աշխատանքային օրենսդրությունը մոտարկելու և միջազգային պարտավորություններին այն համապատասխանեցնելու նպատակով: | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **74. Օրենսդրորեն կատարելագործել արհեստակցական կազմակերպություններ ի (արհմիություններ) գործունեության գործիքակազմը** | ՀՀ ԱՍՀ Ն | Մշակվել և սահմանված կարգով 20.12.2022 N ՆՄ/ԺՍ-1/32050-2022 գրությամբ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը։<br>Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է ընդլայնել արհեստակցական միությունների գործիքակազմը, ապահովել գործուն արհեստակցական միությունների առկայություն, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև գործատուների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում։<br>Միաժամանակ, առաջարկվող լուծումներով արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին։<br>Նախագիծը տեղադրվել է www.e-draft.am կայքում (https://www.e-draft.am/projects/5085)։<br>27.04.2022թ. Նախարարությունում կազմակերպվել է քննարկում՝ ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի, ինչպես նաև Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ներկայացուցչի, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ ներգրավված փորձագետի և Նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ։ Հանդիպման շրջանակներում վեր են հանվել այն հարցերը (այդ թվում՝ ԱՄԿ կոնվենցիաների և | | | Կատարվել է մասամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին անհամապատասխանությունների մասով), որոնց մասով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Արհեստակցական միությունների մասին» օրենքում: 06.05.2022թ. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, ինչպես նաև գործատուների շահերը ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել է աշխատանքային քննարկում, որի ընթացքում քննարկվել են «Արհեստակցական միությունների մասին» և «Գործատուների միությունների մասին» օրենքներում հնարավոր փոփոխությունների ուղղությունները, այդ փոփոխությունների վերաբերյալ գաղափարները: | | | |
| **84.Օրենսդրորեն սահմանել խնամակալության և հոգաբարձության մարմինների կազմավորման և աշխատանքի սկզբունքներն ու կարգը՝ միջազգային չափանիշներին համապատասխան** | ՀՀ ԱՍՀՆ | Խնամակալության և հոգաբարձության մարմնին վերաբերող օրենսդրական փոփոխությունները տեղ կգտնեն «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծում: Առաջարկվող օրենսդրական փոփոխությամբ կհստակեցվի ԽՀՄ-ի դերը և պարտականությունները՝ հաշվի առնելով մինչ այժմ իրականացված ուսումնասիրություններն ու քաղված դասերը: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միջոցառումը ենթադրում է սահմանել ԽՀՄ-ի կազմավորման և աշխատանքի սկզբունքն ու կարգը, մինչդեռ ԽՀՄ-ն ըստ օրենքի համայնքի ղեկավարն է: Ինչ վերաբերում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ ապա հաշվի առնելով իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև | | | Կատարվել է մասամբ |

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | համայնքների խոշորացման հանգամանքը՝ շրջանառվող օրենսդրական փոփոխություններով («ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի և «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծեր) անդրադարձ է կատարվել նաև Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին: | | | |